7.qxd 17/04/2025 12:30 Page 1

ԳԵՂԱՄԱ ՇԱՐԺՈՒՄ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 15 ապրիլի 2025թ. թիվ 7 (611)

ԼՃԱՓԻ ԳՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ՉԱՓԻՉ ԿԱՅԱՆ Է ՏԵՂԱԴՐՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Լճափ գյուղի տարածքում, Սեւանա լճի ափին, վերջերս «ԵՄ-ն Սեւանի համար» ծրագրի շրջանակում տեղադրվել եւ բացվել է հիդրոօդերեւութաբանական չափիչ կայան:

Բացման արարողությանը մասնակցել են Գերմանիայի Դաշնային Հանրապետության նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը, ՀՀ Շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը, ՀՀ ՇՄ նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանը, պաշտոնական այլ անձինք:

Պաշտոնական այցով Հայաստանի Հանրապետությունում գտնվող Գերմանիայի նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերին եւ տիկին էլկե Բուդենբենդերին է ներկայացվել Գերմանիայի կառավարության եւ ԵՄ ֆինանսական աջակցությամբ իրականացվող «EU4SEVAN» ծրագրի շրջանակներում ձեռք բերված ավտոմատ օդերեւութաբանական կայանի աշխատանքները եւ դրա կարեւորությունը Սեւանա լճի համար:

Սեւանա լիճ թափվող գետերի վրա գործող «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի հիդրոլոգիական դիտակետերում ջրի ելքերի չափման համար «EU4Sevan» ծրագրի կողմից ձեռք է բերվել գերմանական OTT ապրանքանիշի հինգ ջրաչափական պտուտան :

Նույն ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել նաեւ «Միկրոստեպ-Միս» ընկերության մեկ ավտոմատ օդերեւութաբանական կայան, որը տեղադրվել է Սեւանա լճի առափնյա գոտում:

Կայանի դերը կարեւորվում է նրանով, որ այն գտնվում է անմիջապես առափնյա գոտում, որը հնարավորություն է տալիս՝ ստանալ օդերեւութաբանական տեղեկատվություն անմիջապես լճի առափնյա հատվածից:

Կայանում տեղադրված գոլորշացուցիչը հնարավորություն կտա՝ հետագայում դիտարկումների տվյալների հիման վրա լրամշակել եւ ճշգրտել Սեւանա լճի մակերեւույթից գոլորշացման մեթոդիկան:

Կայանի բացման պաշտոնական արարողությունից հետո նախարարի տեղակալ Արամ Մեյմարյանը Գերմանիայի նախագահին է ներկայացրել Սեւանա լիճը, դրա բացառիկ նշանակությունը եւ էկոհամակարգային կարեւորությունը:

Նախարարի տեղակալը մանրամասն տեղեկություններ է տրամադրել նաեւ Սեւանա լճի պահպանությանն ուղղված միջոցառումների վերաբերյալ: Հավելվել է, որ լճի ջրի մակարդակի պահպանման համար տարբեր ծրագրեր են իրականացվում, որոնք ներառում են ինչպես ջրի աղտոտման նվազեցման, այնպես էլ՝ ջրային ռեսուրսների կառավարման եւ պահպանման ուղղված գործողություններ:

Արամ Մեյմարյանն անդրադարձել է «ԵՄ-ն Սեւանի համար» ծրագրի շրջանակում ձեռք բերված արդյունքներին՝ շեշտելով, որ ծրագրի իրագործումից շահում են նաեւ ափամերձ համայնքները:

Գերմանիայի նախագահն անձամբ մասնակցել է Սեւանի ափամերձ հատվածից ջրի նմուշառման աշխատանքներին եւ ծանոթացել սարքավորումներին: Ջրի ֆիզիկաքիմիական ստուգումից հետո նա հետաքրքրվել է արդյունքներով: ՊՈԱԿ-ի աշխատակիցները նրան հայտնել են, որ էլեկտրահաղորդականության, թթվայնության, ջերմաստիճանի, քլորոֆիլի, ընդհանուր լուծված աղերի հետ կապված տվյալները գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում, եւ իրենք բավարարված են արդյունքներից:

/շարունակությունը՝ էջ 2-ում/

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՄԱՐԳՍՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Սիրելի՛ մայրեր, կանայք, քույրեր եւ դուստրեր, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ Մայրության եւ գեղեցկության տոնի կապակցությամբ:

Ապրիլի 7-ը մեր ընտանեկան արժեքները մեկ անգամ եւս վերահիմաստավորելու, մայրությունն ու գեղեցկությունը մեծարելու օրն է:

Այս տոնը եւս մի գեղեցիկ առիթ է՝ արտահայտելու ձեր նկատմամբ մեր հարգանքը, ակնածանքն ու սերը, գնահատանքի եւ երախտագիտության խոսքեր հնչեցնելու նրանց հասցեին, ովքեր մեր ընտանեկան երջանկության կերտողներն ու պահապաններն են, ովքեր մեր հասարակության առաջընթացի եւ ազգային վերելքի ամենաեռանդուն ուժերն են:

Մաղթում եմ ձեզ ընտանեկան սեր ու ջերմություն, աշխատանքային հաջողություններ, հասարակական եռանդուն, արդյունավետ գործունեություն եւ հատկապես՝ կանացի հմայք ու գեղեցկություն:

ՀՈՐՍ ԳՅՈՒՂԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՊԱԼԱՏԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ

«Աժդահակ Տուր»-ի ղեկավար Թաթուլ Տոնոյանի շնորհիվ վերջերս ինձ համար կարեւոր բացահայտում եղավ Վայոց Ձորի մարզի Հորս պատմական գյուղը, որտեղ պահպանվել են պատմաճարտարապետական կարեւոր հուշարձանների հետքեր՝ միջնադարյան իշխանական պալատի եւ եկեղեցու տեսքով:

Հնաբույր այս հողը՝ Մեծ Հայքի Սյունյաց նահանգի Վայոց Ձոր գավառը եւ նրա գյուղերից մեկը՝ Հորսը, պարզվում է, հոգեւոր հզոր արժեքներ ունի թաքցրած՝ թե՛ ժամանակների մշուշի, թե՛ հողի հաստ շերտի տակ:

Իսկ մենք գնում ենք Օրբելյան իշխանական տան փառքի ու նրա թողած պատմական ժառանգության հետքերով, այն նյութական ու հոգեւոր ժառանգության, որը օտար ու անողորմ նվաճողների ձեռամբ հայ ժողովրդի համար դժնդակ դարձած տեւական դարերի ընթացքում կարողացել է պահպանել հայկականության դեմքը սրբացած այս հողի վրա, այլադավան ժողովուրդների ու տերությունների մշտահալած օղակի մեջ:

Հորսը գտնվում է Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի տարածաշրջանում, մարզկենտրոնից 24 կիլոմետր հյուսիս-արեւմուտք, Սելիմագետի աջակողմյան Հորս վտակի ափին, ծովի մակերեւույթից 1650 մետր բարձրության վրա: Գյուղից վերեւ Գնդասար լեռն է՝ 2960 մ բարձրությամբ: Գյուղը սահմանակից է Շատին, Սալլի եւ Թառաթումբ բնակավայրերին: Հորսը վերաբնակեցվել է 1918 թվականին, Նախիջեւանի Մեծոփ կամ Օծոփ գյուղից ներգաղթած ընտանիքներով:



Ըստ Հայաստանի 2011 թ. մարդահամարի արդյունքների՝ Հորսի մշտական բնակչությունը կազմել է 321, առկա բնակչությունը՝ 257 մարդ:

Մինչ Հորս հասնելը՝ մեզ զմայլում են լեռնալանջերով մեկ սպիտակին տվող ու ծաղիկ-ծաղկունքի մեջ փթթած անհամար ալոճենիները, որոնք առաջինն են զգացել գարնան շունչը ու նրա գալն ավետել երկնասլաց ժայռերին, անդնդախոր կիրճերին, թեք ու քարքարոտ լանջերին: Ծաղիկները վառվռուն տեսք ունեն՝ մե՛րթ ճերմակ, մե՛րթ կարմիր գույների մեջ, որոնք մեր տեսադաշտից չեն չքանում մեր ուղեւորության ողջ ընթացքում: Բնակավայրի ներսում էլ քիչ չեն ծաղկած ծառերը, կանաչների ու թփերի մեջ թաղված տարածքները, որոնք առանձնակի շուք են հաղորդում գյուղի հնաբույր տներին:

Գյուղամիջում, հին տներ ու շինությունների արանքում էլ մեր առջեւ բացվում է հմայիչ տեսարանը՝ թեկուզ կիսավեր, բայց իր շքեղությունը եւ հետաքրքրությունը չկորցրած իշխանական պալատը՝ սրբատաշ քարերով շարված պատերով, քարեղեն դարպասով, քանդակազարդ որմնախորշերով, քարե սյունախարիսխներով, սյուների մասերով, սրահի ներսի հատակներին, ինչպես նաեւ արտաքին պատերի հարեւանությամբ բացված թոնիրներով:

/շարունակությունը՝ էջ 3-ում/

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԱՂԲՅՈՒՐ ԳՅՈՒՂՈՒՄ ԱՌԱՋԱՏԱՐ ՖԵՐՄԱ Է ԲԱՑՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Խաչաղբյուր բնակավայրում տեղի է ունեցել առաջատար ֆերմայի բացման պաշտոնական արարողություն՝ «Անասնապահության զարգացում Հայաստանում՝ հարավ-հյուսիս-2» ծրագրի շրջանակներում:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչությունից, արարողությանը ներկա են եղել ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տաթեւիկ Սարգսյանը, Ավստրիական զարգացման գործակալության Հայաստանյան գրասենյակի տնօրեն Կլաուս Կապպերը, Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանը, Վարդենիս համայնքի ղեկավար Աիարոն Խաչատրյանը, «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ նախագահ Մկրտիչ Այվազյանը, «Անասնապահության զարգացում Հայաստանում՝ հարավ-հյուսիս-2» ծրագրի ղեկավար Վահե Հովհաննիսյանը, հյուրեր:

Իր ողջույնի խոսքում նախարարի տեղակալ Տաթեւիկ Սարգսյանը բարձր է գնահատել «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ գործունեությունը եւ աջակցությունը պետական ծրագրերի իրականացման ուղղությամբ:

Ավստրիական զարգացման գործակալության Հայաստանյան գրասենյակի տնօրեն Կլաուս Կապպերը ընդգծել է «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ տարիների արդյունավետ համագործակցությունը Հայաստանում անասնապահության զարգացման եւ գյուղատնտեսության ոլորտում ավստրիական լավագույն փորձի տեղայնացման գործում:

Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանն իր խոսքում կարեւորել է մարզում անասնապահության զարգացման, անասնաբուժական կետերի եւ սպանդանոցների վերազինման ուղղությամբ ՌԶԳ ՀԿ-ի իրականացրած ծրագրերը:

Այնուհետ, կարմիր ժապավենը կտրելուց հետո, հյուրերը շրջայց են կատարել ֆերմայի տարածքում, ծանոթացել նրա գործունեության պայմաններին:

Ֆերմայի սեփականատեր Պետրոս Պետրոսյանը հյուրերին ներկայացրել է ծրագրային միջամտությունները ֆերմայի ստեղծման եւ իր՝ որպես ֆերմերի կարողությունների զարգացման գործում՝ ընդգծելով ծրագրի շրջանակում փորձի փոխանակման այցերն Ավստրիա եւ Ֆրանսիա:

Պատվիրակությունն այցելություն է կատարել նաեւ Լուսակունք բնակավայրում հիմնված անասնաբուժական կետ եւ Վարդենիս համայնքում գործող «Արմեն Հարությունյան» ԱՁ սպանդանոց:

«Անասնապահության զարգացում Հայաստանում՝ հարավ-հյուսիս 2» ծրագիրն իրականացվում է «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ի կողից՝ Ավստրիական զարգացման եւ համագործակցության ծրագրային միավորի՝ Ավստրիայի զարգացման գործակալության ֆինանսավորմամբ:

«Գեղամա աշխարհ»

ԼՃԱՓԻ ԳՅՈՒՂԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԶԱՓԻՉ ԿԱՅԱՆ Է ՏԵՂԱԴՐՎԵԼ

/սկիզբը՝ էջ 1-ում/

-Գերմանիայի նախագահին ներկայացրինք մեր երկրի քաղցրահամ լիճը՝ Սեւանը, որը Հայաստանի ամենակարեւոր էկոհամակարգերից մեկն է եւ կարեւոր դերակատարություն ունի երկրի բնապահպանական հաշվեկշռի ու տնտեսական զարգացման առումով: Կլիմայական փոփոխությունների ու մարդկային գործոնի հետեւանքով լիճը որոշակիորեն ենթարկվում է վնասակար ազդեցությունների, որոնցով պայմանավորված խնդիրները լուծելու համար ներկայումս իրականացվում են երկու ծրագրեր, որոնք համաֆինանսավորվում են Գերմանիայի կառավարության ու Եվրամիության կողմից: Առաջինը «ԵՄ-ն Սեւանի համար» ծրագիրն է, որն ուղղված է մի քանի գործոնների ու խնդիրների լուծմանը: Առաջին հերթին խոսքը կայուն գյուղատնտեսության զարգացման մասին է, իսկ երկրորդը վերաբերում է լավ ու արդի բնապահպանական մոնիթորինգային տվյալներ ստանալուն,- ասել է փոխնախարարը:

Մեյմարյանը հավելել է, որ նշված ծրագրի շնորհիվ՝ Սեւանա լճում արդեն առկա է ջրի քանակական եւ որակական տվյալների բավականին լավ, միջազգային չափանիշներին համապատասխան մոնիթորինգ, ինչը հնարավորություն է տալիս լճի պահպանման ու հետագա զարգացման գործում գիտության հիման վրա կայացնել որոշումներ:

Փոխնախարարը տեղեկացրել է, որ իրենք Գերմանիայի նախագահին ներկայացրել են մասնավորապես «ԵՄ-ն Սեւանի համար» ծրագրի շրջանակում ձեռք բերված արդյունքները, ծրագրի ուղղությունները՝ շեշտելով, որ ծրագրի իրագործումից շահում են նաեւ ափամերձ համայնքները, քանզի նոր գյուղատնտեսական մշակաբույսեր են աճեցվում, որոնք ավելի ջրախնայող են, շուկայում բարձր գին ունեն եւ հեշտությամբ են մշակվում: Համայնքների ներկայացուցիչները նույնպես ծրագրի շրջանակում ծանոթացել են Սեւանա լճի խնդիրներին ու մասնակցել դրանց լուծման քննարկումներին: Փոխնախարարը հավաստիացրել է, որ նման ծրագրերը լինելու են շարունակական:

«Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Լեւոն Ազիզյանն իր հերթին նշել է, որ Սեւանի ափամերձ հատվածում տեղակայված գերժամանակակից օդերեւութաբանական կայանը հնարավորություն կտա՝ անմիջապես լճի ափին ունենալ օդերեւութաբանական պարամետրեր մթնոլորտային տեղումների, օդի ու ջրի ջերմաստիճանի, ջրի գոլորշիացման վերաբերյալ, ինչը զգալիորեն կբարելավի Սեւանա լճի ջրի հաշվեկշռի կազմն ու կառավարման հետ կապված որոշումներ կայացնողներին կտրամադրի ճշգրիտ տվյալներ:

-Մեր անկախ երկրում առաջին անգամ ունենք այսպիսի կայան, որն անմիջականորեն տեղադրված է լճի առափնյա հատվածում՝ չնայած այն հանգամանքին, որ ավազանում ունենք օդերեւութաբանական կայաններ, որոնք ափից հեռու են մոտ 6-7 կիլոմետր, ինչը լճի ջրային հաշվեկշռի կազմման համար որոշակի բարդություններ է ստեղծում, մինչդեռ այս կայանը զգալիորեն կհեշտացնի մեր աշխատանքը եւ կլիմայական փոփոխությունների դեպքում կօգտագործվի խոցելիության գնահատման համար,- ասել է Ազիզյանը:

Նա հավելել է, որ հատկապես ջրային ավազանի գոլորշիացման մակարդակը ստուգելու համար անմիջապես լճի մակերեւույթին տեղադրվել է նաեւ գոլորշիացուցիչ, եւ հետագայում դիտարկումների տվյալների հիման վրա կճշգրտվի գոլորշիացումը հաշվարկելու մեթոդաբանությունը:

-Չափման տվյալները կհամադրենք եւ անհրաժեշտության դեպքում կանենք հաշվարկման ճշգրտում: Դա շատ կարեւոր ցուցանիշ է, քանի որ Սեւանա լճի ջրային հաշվեկշռի ամենակարեւոր տարրը գոլորշիացումն է: Հաշվարկները ցույց են տվել, որ լիճ մտնող ջրերի 80-90 տոկոսը գնում է գոլորշիացման վրա: Միջին հաշվով լճից տարեկան մեկ միլիարդ մ/խ ջուր է գոլորշիանում ,- ասել է մասնագետը:

Ազիզյանը նաեւ տեղեկացրել է, որ 2023 թվականին ՀՀ կառավարությունը շրջակա միջավայրի նախարարությանը տրամադրել է 200 միլիոն դրամ, եւ հաջորդ տարի հանրապետության տարբեր մարզերում տեղադրվել են օդերեւութաբանական կայաններ, ինչի արդյունքում օդերեւութաբանական դիտարկումների ամբողջ ցանցն ավտոմատացվել է: Տրամադրվել է նաեւ ամենագնաց ավտոմեքենա՝ հագեցած դաշտային բազմապարամետր չափման սարքավորումներով, ինչը հնարավորություն է տալիս հենց դաշտում ունենալ ջրի առաջնային էկոլոգիական վիճակի վերաբերյալ համապատասխան տվյալներ:

Գերմանիայի նախագահն անձամբ մասնակցել է Սեւանի ափամերձ հատվածից ջրի նմուշառման աշխատանքներին եւ ծանոթացել սարքավորումներին: Ջրի ֆիզիկաքիմիական ստուգումից հետո նա հետաքրքրվել է արդյունքներով:

ՊՈԱԿ-ի աշխատակիցները նրան հայտնել են, որ էլեկտրահաղորդականության, թթվայնության, ջերմաստիճանի, քլորոֆիլի, ընդհանուր լուծված աղերի հետ կապված տվյալները գտնվում են թույլատրելի նորմերի սահմաններում:

-Մենք ուրախ ենք Եվրամիության, գերմանական գիտական ինստիտուտների եւ Հայաստանի միջեւ սերտ համագործակցության համար: Հուսով ենք, որ այդ համագործակցությունը կհանգեցնի Սեւանա լճի ջրի որակի բարելավմանը,- ասել է Գերմանիայի նախագահ Ֆրանկ-Վալտեր Շտայնմայերը:

ՀՀ ՇՄ նախարարություն

ՄԱՐԶԻ ՄԻ ՇԱՐՔ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐ Է ՀԱՏԿԱՑՎԵԼ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ՀԱՄԱՐ

ՀՀ կառավարության 2025 թվականի ապրիլի 3-ի հերթական նիստում որոշում է կայացվել՝ 1 միլիոն 328,7 հազար դրամ հատկացնել Գեղարքունիքի մարզի «Վաղաշենի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ին՝ նորոգման աշխատանքների ընթացքն ապահովելու համար:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, 2024 թվականի նոյեմբերի վերջերից մեկնարկել եւ ընթանում են Վաղաշենի միջնակարգ դպրոցի շենքի հիմնանորոգման աշխատանքները: Շինարարական աշխատանքների պայմանագրային արժեքը կազմում է 187 միլիոն 200 հազար դրամ, որն ամբողջությամբ հատկացվել է պետբյուջեի միջոցներից: Ծրագրով նախատեսված է հատակի եւ տանիքի, սանհանգույցների, կոյուղագծի, ջրամատակարարման ներքին ցանցի նորոգում, նոր դռների տեղադրում, պատերի ներքին ու արտաքին հարդարում, ներկում, մարզադահլիճի ջերմամեկուսացում: Շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտի հասցնել 240 օրվա ընթացքում: ՀՀ կառավարության նույն որոշմամբ ֆինանսական միջոցներ են հատկացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը՝ հանրապետության մարզերի մի շարք դպրոցների շենքային պայմանների բարեկարգման եւ նախապատրաստական աշխատանքների համար:

Գեղարքունիքի մարզից նշված դպրոցների ցանկում ընդգրկված են Սարուխանի թիվ 2, Նորատուսի թիվ 1, Կարմիրգյուղի թիվ 2, Վարդաձորի, Ջորագյուղի, Ծովագյուղի, Ծակքարի եւ Ակունքի միջնակարգ դպրոցները, որոնց դեպքում հատկացված միջոցները կծախսվեն նորոգման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների զննության, չափագրության եւ նախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների ձեռքբերման համար:

ՎԱՐԴԵՆԻԿԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆԸ ՄԱՐԶԱՍՐԱՀ Է ԲԱՑՎԵԼ

Մարտունու համայնքապետարանի, վարդենիկցի երիտասարդների եւ բարերարների աջակցությամբ Գեղարքունիքի մարզի Վարդենիկ բնակավայրում բացվել է մարզասրահ:

Ինչպես տեղեկացրեց Վարդենիկի մշակույթի տան տնօրեն Արտուշ Խաչատրյանը, տեղի երիտասարդների ջանքերով մշակույթի տան սենյակներից մեկը հիմնանորոգվել է ու արդեն ծառայում է գյուղում ֆիզիկական կրթության զարգացմանն ու առողջ ապրելակերպի հաստատմանը:

Մարզագույքի ձեռքբերման համար միջոցներ տրամադրվել է «Ջրասահք» ՍՊԸ կողմից: Նորաբաց մարզասրահում արդեն իրենց պարապմունքներն ու ժամանցն են անցկացնում վարդենիկցի երիտասարդներն ու դպրոցականները:

-Սա առաջին լուրջ քայլն է՝ Վարդենիկում մարզադպրոց ստեղծելու ճանապարհին, որտեղ արդեն պետք է գործեն բռնցքամարտի, ըմբշամարտի, կարատեի եւ ծանրամարտի խմբակներ: Հավատացած ենք, որ առաջիկա տարիներին կկարողանանք մեր գյուղում զարգացնել վերոնշյալ մարզաձեւերը եւ ունենալ միջազգային մրցաշարերում աչքի ընկնող մարզիկներ,- նշեց Արտուշ Խաչատրյանը:

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԱՅՍ ՏԱՐՎԱ ՄԱՐՏ ԱՄՍԻՆ ԾՆՎԵԼ Է 115 ԵՐԵԽԱ

2025 թվականի մարտ ամսին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում լույս աշխարհ են եկել 115 երեխա՝ 55 տղա եւ 60 աղջիկ:

55 երեխա ծնվել է Մարտունու ծննդատանը, 31 երեխա՝ Սեւանի, 17 երեխա՝ Գավառի, 10 երեխա՝ Վարդենիսի բժշկական կենտրոններում, 1 երեխա՝ Ճամբարակի առողջության կենտրոնում:

2024 թվականի մարտ ամսին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժհիմնարկներում ծնվել է 88 երեխա՝ 46 տղա, 42 աղջիկ:

7.qxd 17/04/2025 12:30 Page 3

/սկիզբը՝ էջ 1-ում/

Շինության մուտքի մոտ ազդագիրն է, որը տեղեկացնում է պալատի շինարարության ժամանակագրության եւ ճարտարապետության մասին: «**Իշխան Չեսար Օրբելյանի պալատ, 14-րդ դարի առաջին կես: Կառույցը 13-14-րդ դարերի Հայաստանի քաղաքացիական ճարտարապետության լավագույն նմուշներից է: Ունեցել է եռանավ հորինվածք, քարե չորս սյուների վրա հենված գերանածածկ հազարաշեն տանիք: Ունի կամարակապ դուռ, պատերին կան կամարաձեւ շքաքարե գագաթներով միահարկ եւ երկհարկ որմնախորշեր, մուտքի հանդիպակաց կողմում իշխանական գահախորշն է: Իշխանական տունը շրջապատված է եղել բնակելի եւ տնտեսական կառույցներով, որոնք կենտրոնական կառույցներին են հաղորդակցվել պատերից դեպի այդ սենյակներ տանող դռներով: Ավանդաբար համարվում է, որ այս ապարանքը պատկանել է նշանավոր իշխան Չեսար Օրբելյանին: Հորս գյուղը եղել է Օրբելյանների իշխանական նստոցներից մեկը, այստեղ պահպանվել են իշխան Լիպարիտի որդի Չեսար Օրբելյանին եւ եւ նրա կնոջը՝ հայոց եւ վրաց ամիրսպասալար, մեծ իշխան Սարգիս Զաքարյանի թոռնուհի Խորիշահ իշխանուհուն հիշատակող արձանագրություններ»**:

Ի տարբերություն Հայաստանի տարածքով մեկ պահպանված բազմաթիվ հոգեւոր կառույցների՝ վանքերի, մատուռների ու եկեղեցիների, մեզանում չափազանց քիչ, անգամ բացառիկ են աշխարհիկ ճարտարապետական կառույցները՝ իշխանական տները կամ



պալատները:

Պտտվում ենք պալատի ներսում, դրսի շրջակայքով մեկ, կլանված դիտում շինության տեսքը, տարրերը, հողի տակից պեղումների շնորհիվ բացված պատերն ու հատակը, քարե սյուների մասերը, քանդակազարդ որմնախորշերը, մտովի տեղափոխվում հեռավոր դարերի խորքերը, երբ այստեղ կանքը տրոփել է հայկականությամբ, երբ տարածքին տիրապետել են հայոց իշխանները՝ ապահովելով երկրի խաղաղ ու բարգավաճ կյանքը, արարման թափն ու ստեղծագործ ոգու փայլատակումը:

Չեսարի դարպասի մասին մեզ վկայություններ են հասել միջնադարյան հայ նշանավոր պատմագիր, աստվածաբան, կրոնական եւ քաղաքական գործիչ, արքեպիսկոպոս, Սյունիքի մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի մատենագրությունից :

Այս հուշարձանի մասին տեղեկություն է թողել նաեւ անվանի հնագետ-վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը: «**Գյուղամիջում կա մի հին բնակելի տուն, որը բաղկացած է եղել երկու մասից՝ տնից եւ սրահից: Այդ տունը եղել է ծածկված գերաններով եւ հենված է եղել քարե սյուների վրա: Սյուները եղել են քանդակազարդերով պատված, դրանք պահպանվել են մինչեւ այսօր:Պահպանվում են նաեւ դռան կողմերում գտնվող պատուհանները, որոնք նույնպես կամարակապ են: Կա վիմագիր արձանագրություն, որտեղ հիշատակված է ինչպես Չեսար իշխանը, այնպես էլ նրա կին Խորիշահը: Տունը կառուցվել է 13-14-րդ դարերում, այն կառուցված է եղել սրբատաշ կրաշաղախ քարով եւ կանգուն է եղել մինչեւ 20-րդ դարի կեսերը**»:

Իշխանական պալատից մոտ քսան մետր դեպի արեւմուտք մեր դեմ բացվում են միջնադարյան եկեղեցու ավերակները: Դժվար, անգամ անհնար է միանգամից մտքիդ մեջ ամբարել ու պահել այսքան գեղեցիկ, հազվագյուտ ու բազմազան արժեքներ, որոնք իրար վրա կիտված են մի քանի մետր շառավիղ ընդգրկող այս տարածքում: Մեր շուրջը իրար վրա անկանոն սփռված կամ դարսված են խաչքարերի, տապանաքարերի ամբողջական կամ կոտրված մասեր, նախշազարդ կամ պատկերազարդ շինաքարերի բեկորներ, սյունախարիխսներ, հայատառ արձանագրություններ պարունակող քարեր, որոնցից յուրաքանչյուրը պատմության համար մի բացառիկ վկայարան կամ հիշատակարան է: Ու մեզ համար նաեւ դժվար է՝ այդքան հեշտորեն բաժանվել հոգեւոր այս գանձերից, որոնք ասես մագնիսի պես ձգում ու իրենց են քաշում մեր հոգիներում բռնկված ոգեւորությունն ու անհագ կարոտը: Ընթերցում ենք մի վիմագիր արձանագրության բովանդակությունը. «**Հանուն ամենակարող հզորին...Հանուն Հոր եւ Որդվոյն եւ Սուրբ Հոգւոյն...**»:

Հորսը գյուղը՝ Հորք տարբերակով, առաջին անգամ հիշատակվում է Ստեփանոս Օրբելյանի պատմությունում, որը 10-րդ դարում Տաթեւի վանքին տվել է 12 միավոր հարկ: Հավանաբար այդ ժամանակներից էլ գյուղում եղել է եկեղեցի: Ղեւոնդ Ալիշանը գրել է, որ գյուղի ավերակները վկայում են հնում նրա մեծ բնակավայր լինելու մասին: Հետաքրքիր է, որ 1895 թվականին գյուղի բնակիչները գետինը փորելու ժամանակ գտել են 3000 հատ հին արծաթյա դրամներ: Պահպանվել է եկեղեցու միայն խորանի հյուսիսային անկյունը եւ բազմաթիվ եկեղեցական սրբատաշ քարեր: Այստեղ 1285 թվականին ոմն Տիրիկ (կամ Տիր) ընդօրինակել է ձեռագիր «Ժողովածու», որը պարունակում էր նաեւ Վարդանի «Մեկնութիւն Դանիել մարգարէի» երկը, բարեպաշտ պարոն Լիպարիտի իշխանության եւ Տեր Սարգսի առաջնորդության ժամանակ: Ձեռագրի ստացողը Մաթեւոս վարդապետ Տաթեւացին էր, իսկ Տիրը հիշվում է նաեւ տեղի խաչքարերում, որոնցից մեկը կանգնեցրել է իր հոգու փրկության համար: 19-րդ դարի վերջում եկեղեցին համառոտ նկարագրել է Քաջբերունին. «**Հնութիւնների կարգումն է մի աւերակ կրաշաղախ փոքրիկ եկեղեցի, որի սեղանը կամարակապ է եւ սրբատաշ քարից, իսկ միւս պատերը հասարակ քարից**»: Նույն դարի վերջում եկեղեցին նշել է Ղեւոնդ Ալիշանը. «**Յորս է եկեղեցի մի փոքր՝ սրբատաշ վիմօք ունելով զխորանն, իսկ զայլ մասունս՝ հասարակ կրաշաղախ քարամբք**»:

Ինչպես իշխանական պալատում, այպես էլ եկեղեցու տարածքում 2024 թվականին ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվիրատվությամբ եւ ֆինանսավորմամբ պեղումներ է իրականացրել հնագիտական արշավախումբը՝ հնագետ Ավետիս Գրիգորյանի գլխավորությամբ: Պեղումների արդյունքում հո-

ղաշերտից մաքրվել են պալատի եւ հարակից եկեղեցու ավերակները: Բացվել են կառույցների հիմքերը ներքուստ եւ արտաքուստ, հայտնաբերվել են քանդակազարդ եւ սրբատաշ բազմաթիվ կարեւոր շինաքարեր, սյունախարիխսներ, զուգահեռ իրականացվել են չափագրման եւ հուշարձանախմբի վերականգնման նախագծի պատրաստման աշխատանքները:

Հայտնաբերվել են հնագիտական բազմաթիվ գտածոներ՝ խեցեղեն, քարե եւ մետաղյա առարկաներ, ճրագակալներ, արձանագրություններ, բացվել են եկեղեցու ավերակների վրա կատարված երեք տասնյակ ուշագրավ մանկական թաղումներ:

Ավետիս Գրիգորյանի հավաստմամբ՝ պեղումները հուշարձանի տարածքում կշարունակվեն նաեւ հետագայում, քանի որ, ինչպես ցույց են տվել դիտարկումները, հուշարձանի ամբողջ շրջակայքով մեկ եղել են բնակելի այլ շինություններ, որոնք հիմնականում թաղված են հողի տակ ու իրենց մեջ շատ կարեւոր տեղեկություններ են թաքցնում:

Ըստ հնագիտական արշավախմբի ղեկավարի՝ պալատի հատակում կամ դրսի պատերին մոտիկ հայտնաբերված թոնիրները կառուցվել են ավելի ուշ ժամանակներում, 19-20-րդ դարերի ընթացքում, ինչը հուշում է, որ պալատը կանգուն ու բնակեցված է եղել մինչեւ 20-րդ դարի սկիզբը: Իսկ Խորհրդային շրջանում, մինչեւ 1950-ական թվականները, այն գործել է որպես կոլխոզի պահեստ, ապա վերածվել լքված շինության:

Իհարկե, անչափ դրվատելի եւ ուրախալի է, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը գործուն քայլեր է ձեռնարկել պատմական այս կարեւոր, անկրկնելի հուշարձանների վերականգնման ուղղությամբ, ինչի շնորհիվ ոչ միայն ոչնչացումից ու մոռացությունից վերջնականապես կփրկվեն Հորսի իշխանական պալատն ու եկեղեցին, այլ նաեւ այստեղ նոր շունչ ու թափ կառնի պատմահնագիտական զբոսաշրջությունը:

Չեսար Օրբելյանը պատմական անձնավորություն է, մեր ազգին պատմամշակութային ժառանգություն թողած գործիչ, իշխանաց իշխան Լիպարիտ Օրբելյանի որդին: Ապրել է 13-14-րդ դարերում: Չեսար Օրբելյանը հայտնի է որպես կառուցող եւ բարեգործ: Ըստ պատմական աղբյուրների՝ նրա իրականացրած կառույցներից ամենահայտնին Օրբելյանների իջեւանատունն է, որը գտնվում է Վարդենյաց լեռնանցքում, Գեղարքունք-Վայոց Ձոր մարզերի սահմանաբաժանում: Այն կառուցվել է 1332 թվականին եւ ծառայել է որպես առեւտրային ճանապարհների հանգույց՝ նպաստելով միջնադարյան Հայաստանի տնտեսական եւ մշակութային կյանքի զարգացմանը: Քարավանատունն իր ճարտարապետական ամբողջական տեսքի մեջ վերականգնվել է 1956-1959 թվականների ընթացքում:

Չեսար Օրբելյանը Իվանեի որդի Լիպարիտ Օրբելյանի որդին է, Սմբատ Օրբելյանի եղբայրը, որը հիշատակվել է 14-րդ դարի երեք արձանագրություններում: Չեսար Օրբելյանի մասին առաջին անգամ հիշատակվում է 1310 թվականի մի ձեռագիր հիշատակարանում: Ապա Չեսարը հիշատակվում է Գլաձորի մի խաչքարի 1311 թվականի արձանագրությունում՝ որպես տեղի իշխան: Թեեւ Ղեւոնդ Ալիշանը գրում է, որ Չեսարը Սմբատ Օրբելյանի որդին է, սակայն Օրբելյանների իջեւանատան դահլիճի արեւելյան պատի արձանագրությունից պարզ է դառնում, որ նա իշխանաց իշխան Լիպարիտ Օրբելյանի որդին է, Սմբատի, Էլիկումի եւ Բուրթելի եղբայրը: Չնայած արձանագրության մեջ հիշատակվում են միայն երեք եղբայրներ, սակայն Հովհաննեսը նույնպես Չեսարի եղբայրն է: Չեսար Օրբելյանը հիշատակվում է նաեւ Հորս գյուղի մի խաչքարի 1349 թվականի արձանագրությունում:

Չեսար Օրբելյանի կինը Վարդան Արծրունու դուստր Խորիշահն էր: Նրանք ունեցել են 5 որդիներ՝ Սարգիս, Հովհաննես, Քուրդ, Վարդան եւ Իվանե:

Հորսն ունի նաեւ 12-14-րդ դարերի գերեզմանոց, որտեղ կան մեծ թվով խաչքարեր:

Լիահույս ենք, որ այստեղ հնագիտական պեղումները կշարունակվեն նաեւ այս տարվա ընթացքում՝ բացահայտելով պատմամշակութային նոր ու արժեքավոր տեղեկություններ Հորսի սկզբնավորման, կենսագործունեության, ժամանակագրության ու այլ մանրամասների մասին:

Խոսրով Խլղաթյան

ՔՆՆԱՐԿՎԵՑ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՅՏԻ ԵՎ 2026-2028 ԹԹ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի վարչական շենքում տեղի է ունեցել հանրային քննարկում՝ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ապարատի պահպանման 2026 թվականի բյուջետային հայտի եւ 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերի նախագծի վերաբերյալ, ներառյալ 2025 թվականին հաստատված ՀՀ պետական բյուջեի նկատմամբ համամասնությունը, ինչպես նաեւ հայտերի հիմքում դրված ծախսային հաշվարկ-հիմնավորումները:

Քննարկումն անցկացրել է Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Վահան Զարոյանը:

Քննարկմանը մասնակցել են Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Ջանիկ Բազեյանը, մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Սիմոն Մանուկյանը, մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ եւ աշխատակիցներ:

Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Յուրա Մուշեղյանը հանգամանալից ներկայացրել է միջնաժամկետ ծախսային ծրագրում ներառված ոլորտներն ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների, անդրադարձել 2025 թվականի հաստատված բյուջեին եւ 2026 թվականի հայտի տարբերությանը՝ 2025 թվականի հաստատվածի նկատմամբ, հայտի տարբերությանը՝ 2024 թվականի փաստացի կատարողականի նկատմամբ:

Այնուհետ զեկուցողը պատասխանել է ներկաների կողմից բարձրացված հարցերին:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի 2026 թվականի բյուջետային հայտը եւ 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերի փաթեթը հրապարակված է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում:

«Գեղամա աշխարհ»

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԳԱՎԱՌԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑԻ 4-ՐԴ ՆՐԲԱՆՑՔԸ



Մեկնարկել են Գավառ քաղաքի Ազատության փողոցի 4-րդ նրբանցքի հիմնանորոգման աշխատանքները:

Հիմնանորոգումն իրականացվում է Գավառի 2024 թվականի սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում: Ծրագրի պայմանագրային արժեքը կազմում 35 միլիոն 950 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է նրբանցքի ճանապարհի հիմնանորոգում՝ 545 գծամետր երկարությամբ եւ 2180 քառակուսի մետր մակերեսով: 163 մետր երկարությամբ կտեղադրվի ջրահեռացման համակարգ, 175 մետր երկարությամբ՝ բազալտե եզրաքարեր:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն:

Շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտել 2025 թվականի ընթացքում:

Ալվարդ Մանուկյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԱՏՐՈՆԻ ԴԵՐԱՍԱՆՆԵՐԻՆ

Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի նախաձեռնությամբ մարզում հայտարարված թատերական երկամսյակի շրջանակներում այս անգամ Գեղարքունիքի մարզը հյուրընկալել էր Երեւանի Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնի դերասաններին:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմից, Գավառի Լեւոն Քալանթարի անվան պետական դրամատիկական թատրոնի բեմում Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնի դերասանները ներկայացրել են «Իսկ դրսում ձյուն է գալիս» բեմադրությունը:

Բեմադրությունը դիտելու են հրավիրվել Գեղարքունիքի մարզի տարբեր համայնքների մանկավարժներ, մշակութային հաստատությունների աշխատակիցներ, մարզում գործող բարձրագույն եւ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների պրոֆեսորադասախոսական անձնակազմեր, անհատ քաղաքացիներ:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի նախաձեռնությամբ եւ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության աջակցությամբ մարզում հայտարարված թատերական եկամսյակի ընթացքում սա հերթական՝ 6-րդ բեմադրությունն էր ներկայացվում:

Հասմիկ Շահբազյան

ԳԱՌՆԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ ՈՍԿԵ ՄԵԴԱԼ Է ՆՎԱՃԵԼ ՈՒԺԱՅԻՆ ԵՌԱՄԱՐՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2025 թվականի մարտի 26-30-ը Լեհաստանի Շեդլեց քաղաքում տեղի է ունեցել XPC վարկածով ուժային եռամարտի Եվրոպայի առաջնությունը, որտեղ ոսկե մեդալ է նվաճել սեւանցի մարզիկ ու մարզիչ Գառնիկ Աբրահամյանը:

ՀՊՖ նախագահ եւ գլխավոր մարզիչ Գագիկ Սարոյանի գլխավորությամբ Հայաստանի պաուերլիֆտինգի հավաքականի կազմում հանդես է եկել նաեւ Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի մարզիչ Գառնիկ Աբրահամյանը:

Առաջնությանը մասնակցել են 15 երկրի ավելի քան 400 մարզիկ:

Հայաստանի հավաքականի տպավորիչ արդյունքները գրանցվել են նաեւ Գառնիկ Աբրահամյանի պայքարով: Նա 82,5 կգ քաշային կարգում պառկած սեղմում վարժությունում գրավել է 1-ին տեղը՝ արժանանալով ոսկե մեդալի եւ պատվոգրի:

Արմինե Ղուկասյան

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆ ԾԱՌԵՐԻ ԷՏՄԱՆ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Արդեն մի քանի օր է, ինչ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքում մեկնարկել են ծառերի էտման եւ ձեւավորման աշխատանքները:

Աշխատանքների պատվիրատուն Գավառի համայնքապետարանն է, իրականացնողը՝ «Թիվ 28 ՇՄՇ» ԲԲԸ-ն:

Աշխատանքներն իրականացվում են Գավառի համայնքապետարանից տրամադրված միջոցների հաշվին:

Այժմ ծառերի էտ է կատարվում Գավառ քաղաքում, այնուհետեւ այն կիրականացվի մյուս բնակավայրերի անհրաժեշտ տարածքներում: Ծառերի սանիտարական հատումներին հաջորդելու են կրապատման, կանաչապատ տարածքների խնամքի եւ ծառերի ու թփերի տնկման աշխատանքները:

Ալվարդ Մանուկյան

ՄԱՐՏՈՒՆԻՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՈՒՄՆԵՐ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի բնակավայրերում արդեն մի քանի օր է, ինչ մեկնարկել եւ ընթանում են 2026 թվականի սուբվենցիոն ծրագրերի կազմմանը նպատակաուղղված հանրային լսումներ:

Հանրային լսումներն արդեն ավարտվել են Արծվանիստ, Ծովինար, Զոլաքար, Աստղաձոր, Վաղաշեն,Գեղհովիտ, Ներքին Գետաշեն բնակավայրերում: Հանդիպումներին մասնակցել են բնակավայրերի վարչական ղեկավարներ, տարբեր տարիքի ու մասնագիտությունների տեր մարդիկ, ովքեր հանդես են եկել ամենատարբեր առաջարկներով, որոնք հիմնականում վերաբերում են համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների զարգացմանը:

-Մի բնակավայրում առաջնային կամ հրատապ է համարվում խմելու ջրի, մեկ այլ բնակավայրում՝ ոռոգման ջրի, մյուսում՝ ճանապարհների կամ լուսավորության ցանցի, մանկապարտեզի, գազատարի կառուցման կամ նորոգման հիմնախնդրի կարգավորումը: Այդ առաջարկները մեզ մոտ արձանագրվում են, ուսումնասիրվում, քննարկվում, ապա դառնում են ծրագրային նախնական հայտեր ու ներկայացվում պատկան մարմիններ, իսկ Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվելուց հետո արդեն դրվում են գործողության մեջ: Մեր հիմնական նպատակն է՝ ապագա ծրագրերը կազմելիս տեղերում լսել բնակիչների անմիջական կարծիքները: Հավելեմ, որ 2024 թվականին Մարտունի համայնքում իրականացվել է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված 85 ենթածրագիր, իսկ 2025 թվականին արդեն նախատեսված է իրականացնել 110 ենթածրագիր, որոնցից 34-ը բնակավայրերի ներսի ճանապարհների ասֆալտապատման, 8-ը՝ սալարկման, 14-ը՝ խմելու, 23-ը՝ ոռոգման ջրագծերի, 14-ը՝ լուսավորության ցանցի, 9-ը՝ բազմաբնակարան շենքերի տանիքների, 3-ը մանկապարտեզների, 5-ը՝ մշակույթի տների, 3-ը՝ մանկապարտեզների կառուցման կամ հիմնանորոգման ծրագրեր են, որոնց նախահաշվային արժեքը կազմում է շուրջ 6 միլիարդ 100 միլիոն դրամ: 2025 թվականի սուբվենցիոն ծրագրերի մեկնարկը, ամենայն հավանականությամբ, կտրվի 2025 թվականի հունիս-հուլիս ամիսներից, իսկ 2024 թվականից 2025 թվական տեղափոխված ծրագրերի մեկնարկն արդեն տրված է,-ներկայացրեց Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանը:

2026 թվականի սուբվենցիոն ծրագրերի կազմման գործընթացին նպատակաուղղված հանրային քննարկումները ապրիլ ամսի ընթացքում կկազմակերպվեն նաեւ մարտունի համայնքի մնացած 10 բնակավայրերում:

Խոսրով Խլղաթյան

7.qxd 17/04/2025 12:30 Page 5

ԱԳԱՐԱԿԱԾՈՐԻ ՔԱՐԱՆՁԱՎՆ ՈՒ ՎԻՇԱՊԻ ԿԻՐՃԸ

Վայոց Ձորի մարզի Ագարակաձոր գյուղի արեւելյան եզրով դաշտամիջյան գրունտային ճանապարհը մեզ տանում է դեպի հարավ, դեպի անվերջանալի ժայռաստաններ, որոնցից յուրաքանչյուրը բնության անկրկնելի ու հրաշք հուշարձան է, մարդկային աչքի համար գրավչության անսպառ դիտարան: Արտասովոր տեսարաններ են բացվում մեր առջեւ՝ ընդգծելով լեռնագագաթների, լեռնալանջերի, անդնդախոր ձորերի, լեռներին գրեթե հպված ամպերի, քարերի ու ժայռերի միջից ծլարձակած բուսաշխարհի գեղեցկությունները:

Գարնանաբույր Վայոց Ձորը մի հրաշալի թարմություն է սփռել շրջապատում, տարածել բնության ամենաբազմազան, ամենաշռայլ ու դիտարժան գույները: Մեր դիմաց Գայլի ականջ լեռն է, որի հյուսիսային ստորոտում տարածվում է Հայաստանի ամենանեղ կիրճը, որին Վիշապի կամ Գրավի կիրճ են անվանում: Բոլորեքյան տարածվող ողորկ եւ ուղղահայաց վեր բարձրացող ժայռերի վերին, ստորին կամ մեջտեղի հատվածներում բացված բնական խոռոչները միանգամայն հուշում են քարանձավների գոյության մասին, որոնց մեծ մասը դժվարամատչելի են մարդկանց համար:

Այս կուսական ու վայրի բնության մեջ մարդկային ձայնը արձագանքում է շատ խորհրդավոր ու կայծակնային արագությամբ, ժայռապատ ձորերի լայնք ու երկայնքով ու խորությամբ մեկ:

Ի տարբերություն լեռնածերպերի ահարկու մակերեսները շոշափող մարդկային ձայնի՝ մարդկային ոտքերն այդպես էլ անմատչելի են մնում երկնասլաց քարակարկառների համար, եթե դրանց լանջերին ընդգծված արահետներ չեն նշմարվում:

Այդպիսի մի նշմարվող արահետով «Աժդահակ Տուր»-ի ղեկավար Թաթուլ Տոնոյանը մեզ առաջնորդում է դեպի Ագարակաձորի քարանձավ, որը գտնվում է Վիշապի կիրճի արեւելյան ժայռաշղթայի վերնամասում:

Վիշապի կիրճի քարանձավը բավական ընդարձակ սրահ ունի՝ ավելի քան 10 մետր բարձրությամբ ու նույնքան էլ լայնությամբ: Խորքում այն նեղանում է, դառնում փոքր անցք ունեցող գետնախորշ, որի մուտքը լցված է քարով ու հողով: Շատ հնարավոր է, որ այն ժամանակին գաղտնուղի է ծառայել այստեղ ապաստանած մարդկանց համար:



Չնայած դրսում տաք եղանակ է, բայց դա չի խանգարում, որ մի քանի մետր դեպի ներս, արդեն քարանձավի մեջ, դեմքիդ հպվի սառնաշունչ օդը:

Իսկ քարանձավի ներսից, ինչպես ափիդ մեջ, աչքերիդ առջեւ բացվում է մի զարմանահրաշ տեսարան՝ Վիշապի կամ Գրավի կիրճը, որի վրա սփռված արեւի լույսը ճառագում է բոցեղեն փայլով՝ երեւան հանելով հեքիաթային ու դրախտային այս վայրի բնական հրաշալիքները: Տեսածդ մի անգերազանցելի բնանկար է թվում, շքեղաշուք քանդակ, հավերժության զգացում, որից աչքդ չես կարող կտրել ոչ մի ակնթարթ:

Թաթուլի առաջնորդությամբ էլ դուրս ենք գալիս քարանձավից ու նեղ արահետով իջնում դեպի ձորը, որի նեղ կիրճով էլ, տասնյակ կիլոմետրերի վրա, ձգվում է Վիշապի կիրճը: Մեր առջեւ կարծես բացվում են դրախտի սքանչելի դռները, որտեղ ամեն ինչ շնչում է վայրի նազանքով, սիրո հմայքով, կուսական անուրջներով, կախարդական ձայներով, գույնզգույն ու վառվռուն ծաղկաստաններով: Մենք այդ հեքիաթային բաց ու լայն դռնով մտնում ենք երկնասլաց երկու ժայռերի արանքը ու քայլում դեպի հարավ: Կիրճը մեր ոտքերի տակ ու կողքերում աստիճանաբար նեղանում է այնքան, որ առաջ գնալու համար մեզ մի երկու-երեք թզաչափ լայնության արահետ է մնում: Մեր ոտքերի տակ ու կողքերում ավելի շատ քարաժայռեր են, քան թե հողածածկույթ, սակայն ծառերն ու թփերը իրենց ծիլերի զորությամբ կարողացել են ճեղքել ապառաժե կարծրությունները ու ձգվել դեպի արեւի կենարար շողերն ու կուսական օդի արձակ տարածությունները: Ահա քեզ գաղտնախորհուրդ աշխարհը, որտեղ կյանքն այլ հմայքի, անուրջների ու ձգտումների, ձգող էներգիայի մեջ է, որտեղ ամեն մի երկրային վայելքից կարելի է գոնե մի կարճ ժամանակ հրաժարվել՝ հանուն այս կուսական վայրով գոնե մեկ անգամ քայլելու հաճույքը ըմբոշխնելու համար:



Մեր ոտքերի տակ դեռ չչորացած կավացեխ հատակն է, ինչը հուշում է, որ օրեր առաջ այստեղով հոսել ու արդեն սպառվել է ձնհալի ջուրը, որի կարկաչի արձագանքը առավել հաճելի կլիներ մեր ականջներին: Իսկ մեր գլխավերեւում երկնակամարը չի երեւում, քանի որ երկու կողմերից կիրճի բարձրաբերձ ժայռերն այնքան են մոտեցել իրար, որ հազիվ մի փոքր ճեղք է առաջացել, որտեղից ընդամենը մի շողագիծ լույս է թափանցում:

Մի տեղ արդեն, մի քանի կիլոմետր անցնելուց հետո, ստիպված ենք լինում հետ վերադառնալ, քանի որ առաջ գնալը արահետի նեղանալու պատճառով դառնում է թե՛ անհնար, թե՛ վտանգավոր: Ու վերադարձի ճանապարհն էլ նույնքան տրամադրող է, նույնքան գրավիչ ու չհոգնեցնող: Այստեղ արդեն առջեւդ բացվում է նոր աշխարհ, կիրճը հյուսիսային կողմից աչքիդ երեւում է մի այլ հմայքով ու տեսադաշտով: Խորհրդավոր, հոգեպարար լռության մեջ էջառէջ աչքերիդ առջեւ բացվում-թերթվում է բնության հավերժող գիրքը՝ արարչագործ ոգու ողջ զորությամբ: Կիրճի խորունկ հատակից արդեն մենք չափում ենք Ագարակաձորի քարանձավի մոտքը, այն քարանձավի, որտեղից ընդամենը մեկ ժամ առաջ դիտում էինք հայրենի բնաշխարհի ողջ համայնապատկերը:

Կիրճի արեւմտյան ժայռապատերին էլի ուրիշ քարանձավների մուտքեր են երեւում՝ ընդգծված լայն անցքերով, որոնք, սակայն, մեծիմասամբ աննվաճելի են հետիոտնի համար՝ գետնից բավականին բարձր ու ողորկ լինելու պատճառով: Իսկ ահա ալպինիստներն այստեղ իրենց կարող են շատ երջանիկ զգալ՝ այս նոր ու բացառիկ աշխարհը բացահայտելու համար:

Իսկ այս ամենը տեսնելու եւ զգալու համար հարկավոր է կյանքում գոնե մեկ անգամ մտնել Ագարակոձրի քարանձավ, քայլարշավ ձեռնարկել Վիշապի կիրճում:

Խոսրով Խլղաթյան

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՑԵՐԵԿՈՒՅԹ

Գավառի պետական համալսարանում տեղի է ունեցել «Կնոջը գովերգում են բոլոր մուսաները» խորագրով ցերեկույթ՝ նվիրված Մայրության եւ գեղեցկության տոնին: Միջոցառումը կազմակերպվել էր բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Նելլի Գրիգորյանի նախաձեռնությամբ:

Ցերեկույթը մեկնարկել է խորհրդանշական բեմադրությամբ՝ Սուրբ Մարիամ Աստվածածնի ավետման տեսարանով: Գաբրիել հրեշտակապետի եւ Մարիամի հանդիպումը ներկայացվել է որպես մայրության, լույսի ու հավատքի խորհրդանիշ: Միջոցառման ընթացքում հիշատակվել են աշխարհահռչակ հայ կանայք, ովքեր բարձր են պահել մեր ժողովրդի անունն աշխարհի տարբեր անկյուններում:

Ուսանողներն իրենց խորին երախտագիտությունն են հայտնել Հայաստանի Հանրապետության Սփյուռքի առաջին նախարար, Գավառի պետական համալսարանի համահիմնադիր, հայտնի պետական-քաղաքական գործիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանուշ Հակոբյանին՝ պետականաշինության, օրինաստեղծման, կրթության, գիտության ոլորտներում անգնահատելի ավանդի համար:

Հրանուշ Հակոբյանը կարեւորել է կանանց դերը կյանքի շարունակականության ապահովման, աճող սերնդի կրթության եւ դաստիարակության, ազգային արժեքների պահպանման ու փոխանցման, գիտության, մշակույթի, առողջապահության եւ այլ ոլորտների զարգացման գործում:

Ցերեկույթին մասնակցել եւ իրենց ջերմ շնորհավորանքն ու բարեմաղթանքները ԳՊՀ ուսանողուհիներին եւ կին դասախոսներին ուղղել են «Հայաստան» պարբերականի գլխավոր խմբագիր, ՀՀ վաստակավոր ժուռնալիստ Տիգրան Նիկողոսյանը, Երեւանի թիվ 171 դպրոցի տնօրեն Արամ Սաֆարյանը, Գավառի քաղաքային գրադարանի տնօրեն Նարինե Նանագուլյանը, Գեղարքունիքի Վարդգես Պետրոսյանի անվան մարզային գրադարանի աշխատակազմը, Գավառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի մեթոդիստ Ռուզան Վարդանյանը:

Տոնական օրն իրենց գեղեցիկ երաժշտական կատարումներով զարդարել են Գավառի Հենրիկ Թալալյանի անվան երաժշտական դպրոցի եւ Նորատոսի արվեստի դպրոցի սաները:

Գավառի Պետական Համալսարան

ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՍԱՐՈՒԽԱՆ ԳՅՈՒՂԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Արդեն մի շաբաթ է, ինչ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Սարուխան գյուղում մեկնարկել եւ ընթանում են Թումանյան փողոցի հիմնանորոգման աշխատանքները:

Շինարարությունն ընթանում է ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Սարուխանի Թումանյան փողոցի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 35 միլիոն 500 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է Թումանյան փողոցի հիմնանորոգում՝ ասֆալտապատման միջոցով, 483 մետր ընդհանուր երկարությամբ եւ 2264 քառակուսի մետր մակերեսով: Շինաշխատանքներն իրականացնում է Գավառի ՃՇՇ ԲԲԸ-ն:

Ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները նախատեսված է ավարտել 2025 թվականի ընթացքում:

Ալվարդ Մանուկյան

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ ԳՐՔԵՐ Է ՆՎԵՐ ՍՏԱՑԵԼ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՆԻՑ

Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության մշակույթի եւ համագործակցության հարցերով պատասխանատու Դոմենիկ Վեսը Գավառի պետական համալսարանին նվիրել է ֆրանսերեն գրքեր:

Այնուհետ Դոմինիկ Վեսը եւ Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը քննարկվել են համագործակցության հնարավոր ուղղությունները:

Գրքերի հավաքածուն կազմվել է Ֆրանսիայում գործող "Defis Humanitaires" մարդասիրական կազմակերպության նախագահ Ալեն Բուանեի նախաձեռնությամբ, ֆրանսիացի գրող Սիլվեն Տեսոնի հովանավորությամբ: Ծրագրին իրենց աջակցությունն են ցուցաբերել նաեւ Ֆրանսիայի Ազգային հրատարակչական միության նախագահ Վենսան Մոնտանը, Ռենո հրատարակչությունը եւ Օվերն-Ռոն-Ալպեր տարածաշրջանային իշխանությունները:

Նվիրատվության մեջ ներառված են ժամանակակից ֆրանսիական գրականության նմուշներ, որոնք կօգտագործվեն համալսարանի ֆրանսերեն լեզվի եւ գրականության դասընթացներում, ինչպես նաեւ կառաջարկվեն ֆրանսերեն լեզվին տիրապետող ընթերցողներին:

«Գեղամա աշխարհ»

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ ՆԱՀԱՊԵՏԸ

/սկիզբը՝ նախորդ համարում/

«Հրազդան» բանաստեղծությունը ընկերներին կորցրած պանդխուտի սրտահույզ զրույցն է հայրենի գետակի հետ, որ անդադրում կեղեքում է հայ մարդու հոգին .

Հրազդա՛ն, գետակդ իմ հայրենի,
Հրազդա՛ն, ջրիկդ իմ անուշիկ,
Ահա թողել զհողն օտարի,
Բաբկենս հասել եմ պանդխտիկ.
Ա՜յ Հրազդան, ա՜յ ջուրք հայրենիք,
Ա՜յ ափունք, է՞ր լայք լըռիկ...
Դուք կարկըջիկդ է՞ր եք մոռցել,
Ծիծղան երեսդ է՞ր սուգ ունի...

Մեր դասական գրականության մեջ պանդխտությանը նվիրված լավագույն բանաստեղծություններից մեկն է «Հրազդան»–ը, իր անմիջականությամբ նույնքան հուզիչ, որքան եւ մեր ժողովրդական պանդխտի երգերը: Բանաստեղծությունը բողոք է մեր ժողովրդի անողոք ճակատագրի, նրա բազում թշնամիների դեմ, որոնք անդադար գալիս ու ամայացնում են մեր հայրենիքը, գերության քշում հարյուր հազարավոր խաղաղ մարդկանց՝ նրանց դարձնելով հայրենազուրկ ու պանդուխտ, նրանց աչքը կարոտով թողնելով հայրենի տան ու հարազատների ճամփեքին:

Իմ ընկերներն ու՞ր են, Հրազդան,
Միթե՞ պարսիկին եղան գերուկ,
Միթե ամենն ի հո՞ղ մտան,
Ա՛հ, անցուգնաց եղել է ամեն...
Անցի՛ր, գընա, ջըրիկ հայրենի,
Արտսունք հերիք են Բաբկենի:

Այս բանաստեղծության ակունքներից է բխում Ռափայել Պատկանյանի հանրահռչակ «Արաքսի արտասուք»-ը, որ պիտի լույս աշխարհ գար «Հրազդան»-ի երկնումից տասնամյակներ անց ու միանգամից տեղ գտներ հայ ժողովրդի սրտում:

Ի տարբերություն «Հրազդան»-ի ստեղծած թախծոտ ու հուզիչ տրամադրության՝ «Հայ հայրենիք» բանաստեղծությունն աչքի է ընկնում իր ընդգծված լավատեսությամբ, ապագայի հանդեպ խորին հավատով ու սպասվող հույսով: Դա խանդավառ գովք է հայրենի երկրի բնության մասին: Գեղեցիկ է հայկական լեռնաշխարհի նկարագրությունը, որ տրված է պայծառ գույներով ու մեղեդայնությամբ.

Հայո՛ց աշխարհիկ, գարունդ է հասել,
Ահա գեղեցիկ գարուն քո եկել.
Ո՛վ դու իմ վաղուց մոռցված հայրենիք,
Ո՛վ դու իմ սըրտիս անմոռաց տեղիք...
Այն բարձրը ժայռից, որ երկնուց են մոտ,
Կենաց օրհնության ծագե առավոտ...
Լերինք եւ հովիտք ընդարձակ ու լայն
Նախշուն զարդարին նոր հարսի նըման,
Կապուտակ սարերդ գունըզգուն պսակ,
Կապեն ի գըլուխ զինչ նոր թագվորակ.
Ի ծայրն սարից, որ երկնուց են մոտ՝
Փըռվի մինչ ի խորն հորոտն ու մորոտ...
Հանց քեզ տերն է տվել գարուն գեղեցիկ,
Որ դրախտի նմանիս, Հայո՛ց աշխարհիկ...

Սքանչելի է ծաղիկների բազմերանգ գորգը՝ փռված լեռնալանջերով ու դաշտերով մեկ, սքանչելի են սարերից ի վար վազող ու գոչգոչող վտակները, անմահական է հայրենի ջրի համը, ապրեցնող ու կենարար՝ հայրենի օդը, հովն ու զովը: Իսկ հողի քաղցրությունը հայ մարդու երակներում եռացող արյան մեջ է:

Մանկտիք, զիս հայոց հողն ու ջուրն սնուցել,
Ես այն հող ու ջուր սրտով եմ սիրել...
Հայաստանի օդն է քաղցր ու բարակ,
Հովերն են անուշ, պայծառ են վտակք.
Ջուրն ու պտուղն համ տան անմահության,
Խոտն ոսկեզօծե գառներու բերան.
Ոսկեթել ամպոց այգուն զովագին
Թորթոր իջանե ցողիկ մանրագին,
Կարմիր ճաճանչով արեւին շաղված
Գա ի խավրծիլ, մանանա կենաց;
Ո՛հ, լերունք ծաղկած, ո՛հ ջուր ծիծաղկոտ,
Ջանուշիկ հովերդ ի զիս ածեք մոտ.
Հողմունք անուշիկք, եկեք մոտ ի զիս,
Շունչ ու երգս առեք, տարեք ի Մասիս...
Ծառն արմատով ծառ, տունն հիմամբն է տուն...

Ալիշանը հպարտանում է իր հայրենիքով՝ այն համարելով Աստվածաշնչյան դրախտը:Այստեղ՝ Արարատի սուրբ կատարին է հանգրվանել համաշխարհային ջրհեղեղից փրկված Նոյը, այստեղ է կազմավորվել ու զարգացել հայ ժողովուրդը, սկիզբ դրել պետականությանը, դարեդար մաքառել իր ազատության համար: Զորավոր ու սուրբ են եղել նրա արքաները՝ երկիր պաշտպանող ու շենացնող: Ապա մեր հողի վրա է իջել Աստվածային հայտնությունը՝ սուրբ նիզակով ու խաչով: Եվ այդ հայրենիքն առաջինն է հասու եղել Աստվածային ճշմարտության լույսին՝ պահպանելով քրիստոնեության նշխարներն ու արժեքները: Օտար նվաճողները շատ են ջանացել ջնջել մեր հավատի հետքերը, սակայն հայը տոկացել է աշխարհավեր բոլոր հողմերի դեմ: Եվ հավատում է Ալիշանը, որ հողմերից հետո մեր աշխարհի վրա կծագի արեւը, օդը կլցվի գարնանային բույրերով, խիճդ ու ծիծաղով:

Ամպն եւ փոթորիկ շուտով վերանա,
Նոր արեւ, գարուն, ծառն ու այգին գա:
Արմատք հին՝ նոր ճյուղ, հին ճյուղք նոր ծաղիկ
Ընծայեն բնության, Հայոց աշխարհիկ...

Հուզականությամբ լի է նաեւ «Պլպուլն Ավարայրի» բանաստեղծությունը, որտեղ Ալիշանը մենախոսում է հինգերորդ դարի նշանավոր պատմագիր Եղիշե Ոսկեբերանի հետ, կիսում նրա մորմոքը եւ հպարտությունը, խոհերն ու պատգամները: Ալիշանի համար եւս թանկ անուններ են Ավարայրի արծիվ Վարդան Մամիկոնյանն ու նրա քաջ նահատակ զինվորները, ովքեր մարտիրոսվեցին հայրենի հողի ու հավատի պաշտպանության համար: Քաղցրազրուցիկ Եղիշեի ձայնը նա ուզում է բարձրագոչ տարածել աշխարհով մեկ, որպեսզի պանդուխտ հայորդիների համար այդ սրբազան ու ազգահավաք ձայնը լսելի լինի:

Թե կիսահոգի պըլպուլիս նըման
Ձենիկս հասնի ձեզ, որդիք Թորգոմյան,
Որդի՛ք, որոնց հարք քաջք ու առաքինիք
Լըցուցին զդաշտեր, գըրքեր ու զերկինք..
Թե ի ծով սրտիդ կաթիլ մ՚ արունիկ
Կաթե Հայ աղբուրըն կամ Պահլավիկ,
Թե զփառքն հայրենյաց ձեզ ալ գրեք փառս,
Հետ Նահապետիս ելեք ի Արտազ:

«Հայ հայրենիք» բանաստեղծությունը սիրո անկրկնելի ծոն է Հայաստանին, այն երկրին, որը բանաստեղծը կրում էր իր սրտում՝ նրա տրոփյունը զգալով ամեն ակնթարթ: Անշուշտ, բանաստեղծության հիմքում ականավոր հայագետի տարիների տքնաջան աշխատանքն է, պրպտումների, ուսումնասիրությունների արդյունքը: Հայրենի աշխարհը կենդանանում է իր հմայիչ առավոտներով, կուսական օդով, ձյունածածկ կամ ծաղկառատ լեռներով, ականակիտ աղբյուրներով, երգեցիկ հավքերով: Ալիշանին ծանոթ էին իր երկրի ամեն մի գյուղը, գավառը, լեռը, թուփը, քարը, ձորը, ծաղիկը, հերոս մարդիկ, թագավորներն ու զորավարները, սրբերն ու եկեղեցու նվիրական հայրերը: Եվ այդ ողջ իմացությունը թափանցել է այս բանաստեղծության մեջ:

Վարդ կու թափեր աշխարհ Հայոց.
Ցողըն տեղայր զով ու սիրուն,
Ձինչ մարգարիտն ի սատափուն,
Կարմիր-կանաչ, ծին ծիրանի
Գոտի ածվեր Հայաստանի:
Լերանց սարերն բարձրածայր
Ոսկի պսակ եղան հավսար.
Հայոց գետերն հազարավոր
Իջանեին ճաճանչավոր...

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման նկատմամբ Ալիշանի դիրքորոշումը պարզաբանելու տեսակետից խիստ ուշագրավ է «Մասիսու սարերն» բանաստեղծությունը՝ գրված 1849 թվականի մարտին, այն օրերին, երբ իտալացի հայրենասերները Վենետիկի փողոցներում հերոսական մարտեր էին մղում ավստրիական բռնատիրության դեմ:

Բանաստեղծությունը կառուցված է Փոքր եւ Ավագ Մասիսների միջեւ տեղի ունեցող երկխոսության վրա: Փոքր Մասիսը տարակուսանք է հայտնում հայ ժողովրդի քաղաքական ինքնուրույնությունը վերականգնելու նկատմամբ.

Նա ժամանակակից հայերի սրտերը մեռած, սառած է համարում. նա կարծում է, թե հայոց արեւն անցել է եւ «մեզ արեւմուտքի լուսիկն է մնացել»: Ավագ Մասիսը փարատում է Փոքրի տարակուսանքը, այնպիսի սառնկրծքեր կան, որ ունեն «սիրտ հրավառ». քարից կայծ է դուրս գալիս, իսկ կայծից՝ կայծակ. արեւը մտած է, սակայն նա նոր լույսով կծագի առավոտյան, ամպն էլ կփարատվի, մրրիկն էլ կդադարի: Հայաստանի ճրագն էլ, որ մարած է թվում, կրկին կվառվի, որովհետեւ՝ «իսկի անփոփոխ չէ բախտն աշխարհիս»: Փոքր Մասիսի այն հարցին, թե ե՞րբ պիտի վառվեն սրտերը, ե՞րբ պիտի տեսնենք այդ երջանիկ օրերը, Ավագը պատասխանում է.

Երբ հետ դարերու առաջին անգամ
Ես, Ավագ Մասիս, ներսուց որոտամ,
Կանչեմ ու շընչեմ, արձակեմ ծուխ, բոց,
Սասանեցնեմ զԱրարատն հայոց,
Այս ընկի նըշան հայոց աշխարհին,
Թե գա ժամանակ, որ գան փառ?քն այլ հին...

Փոքր Մասիսն իր հերթին մյուս սարերին ազդարարում է, թե՝

Երբ շարժի Ավագ, շընչե ծուխ ու բոց,
Նըշան է բարվո Աշխարհին հայոց,

Ուշագրավ են բանաստեղծության եզրափակիչ տողերը, որոնցով Նահապետը շարժման է կոչում Ավագ Մասիսին եւ հայ երիտասարդությանը.

Շարժի՜ր, հա՜ շարժիր, Ավագըդ Մասիս,
Արձան պարծանաց Հայոց աշխարհիս,
Շընչե՜, հա» շընչե, ծըխիկ ծիրանի,
Որ քո մանկըտյաց հուսո նըշան ընկի...
Ահա շարժեցավ Ավագըն Մասիս...
Ահա շարժեցան դաշտք Արարատա,
Դուք այլ շարժեցե՜ք, մանկըտիք Հայկա...

Մասիսի հրաբխային ժայթքման բանաստեղծական պատկերի մեջ Ալիշանը, անշուշտ, դրել է ապստամբության, ազատագրական պայքարի գաղափարը: Այստեղ արտահայտված է բանաստեղծի հավատը ժողովրդի ուժերի նկատմամբ, որ թեեւ թմրած է, բայց մի օր դուրս է հորդելու՝ ինչպես Մասիսի խորքում թաքնված հրաբխային կրակը: Ալիշանի հայրենասիրական պոեզիան, գրեթե ամբողջությամբ, հյուսված է պատմական հենքի վրա: Նրա համար պատմությունը ինքնանպատակ չէր. բանաստեղծորեն վերակենդանացնելով հայ ժողովրդի անցյալի հերոսական դրվագները, նա ձգտում էր քաջ նախնիների արիության գործերով ոգեշնչել ժամանակակիցներին, նրանց մղել սխրագործության՝ հանուն հայրենիքի ազատության: Այս տեսակետից ուշագրավ են «Ճակատամարտ Ձիրաւայ եւ քաջակորովն Մուշեղ», «Երգ ու գնացք զօրացն հայոց ընդ Վահանայ Մամիկոնեոյ ի Շաւարշական դաշին վրէժք» «Բա՛մ, փորոտան...», «Աշոտ Երկաթ ի ծովուն Սեւանայ» ստեղծագործությունները եւ, մանավանդ, «Պլպուլն Ավարայրի» պոեմը, որի հմայքը մեծ է եղել ժամանակակիցների համար եւ որը ներշնչել է Ռ. Պատկանյանին՝ գրելու իր «Քաջ Վարդան Մամիկոնյանի մահը» ստեղծագործությունը:

Խոսելով ազգային-պատմական հուշարձանների մասին՝ Ալիշանը նկատում է. «Ո՛հ, երբ այսպիսի հիշատակաց վրա շարժի գրիչն չի կրնար գոնե կարծեր չցատքեցնել. պատմիչն հանկարծ վիպասան կըլլա, բանադատն՝ բանաստեղծ...»:

Եվ իրոք, հայագիտական իր աշխատություններում պատմիչ ու բանադատ Ալիշանը երբեմն դառնում է վիպասան ու բանաստեղծ:

Ալիշանի անունն այլեւս պատկանում է հայ ժողովրդին ու հայոց դարերին: Այս մասին առավել պատկերավոր հավաստում է Դանիել Վարուժանը:

Օր մը, գուցե, նույնիսկ քունեդ ալ զարթնուս՝
Երբ հայ ճամփորդ մ՚ եկած դրախտի Երկրեդ՝ ա՛լ
Ժըպիդ բերե քեզ՝ արցունքի տեղ անհույս.
Օր մը գուցե, զարթնուս նույնիսկ քունեդ ալ:
Եվ իցի՛վ թե. Դեռ պետք ունի Հայը քեզ.
Հայը հյուղին, բանտին, վըշտին, խավարին.
Հայն որ, անգետ, կը սայթաքի աղեկեզ.
Եվ Հայն, որ, նենգ, կը սայթաքե մոլեգին:

ԽՈՍՐՈՎ ԽԼՂԱԹՅԱՆ

7.qxd 17/04/2025 12:31 Page 7

ԴՈՒՆՈՒԾԸ

/սկիզբը՝ նախորդ համարներում/

Դիրեկտորն անհանգստացավ, վերադարձավ գրասենյակ եւ արդյունքի մասին հեռախոսով հայտնեց թաղամասի միլիցիային: Մի քանի ժամ հետո ստեղծված էր համապատասխան հանձնաժողով՝ դուռը ջարդելու եւ ներս մտնելու իրավունքով: Երբ ջարդված դռնով մարդիկ մտան ներս, զարմանքով տեսան, որ Ադոն պառկած է փայտե թախտի վրա եղած իր անկողնում՝ առանց կենդանության նշանի:

-Մեռած է,- գրեթե միաժամանակ բացականչեցին հանձնաժողովի անդամներից շատերը:

-Հա, հոգին փչել է,- կրկնեցին մյուսները:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դռան փակն այնպիսի է, որ փակվում է ինքնիրեն: Դա մի հանգամանք էր, որ անհնար էր դարձնում ուրիշի՝ Ադոյի մոտ մուտք գործելու իսկության հաստատումը: Հանձնաժողովի այն կասկածանքը, որ գուցե մարդիկ միտումնավոր ներս են մտել ու սպանել Ադոյին, չէր հիմնավորվում, քանի որ նրա մարմնի վրա չկար որեւէ հետք, որ կասկած հարուցեր սպանության մասին: Չնայած բժիշկներից երկուսը ինչ-որ չափով համոզվում էին, որ նրա քիթն ու բերանը խցկված են եղել: Բայց այդ բանը կատարվել է այնպիսի զգուշությամբ, որ Ադոյի դեմքի եւ քիթուբերանի վրա ոչ մի հետք չկա: Հանձնաժողովը նպատակահարմար գտավ՝ ակտավորել, որ աղբ հավաքող ու բարձող բանվորը մահացել է բնական մահով՝ սրտի արատի պատճառով: Այդ լուրը հայտնի դարձավ գործարանի բանվորներին: Նրանցից շատերը հավաքվեցին տնակի դռանը: Շատ շատերը տեսան նաեւ մահացածի դիակը: Այնտեղ էր նաեւ Արտավազդը, ով ճանաչեց Ադոյին եւ խորապես վշտացավ նրա հետ կատարվածով:

Գործարանի դիրեկցիան իր հարգանքի տուրքը մատուցեց հանկարծամահ եղած բանվորին. նրա համար պատրաստել տվեց դագաղ, դիակը Ադոյի հայրենի տուն հասցնելու համար տրամադրեց համապատասխան գումար եւ Արտավազդին տրվեց գործուղում՝ դիակը տեղ հասցնելու ու այն հարազատներին հանձնելու նպատակով:

Ուշ երեկո էր, երբ Արտավազդը մի բեռնատար ավտոմեքենայով Ադոյի դիակը հասցրեց գյուղ: Հարցուփորձ անելով՝ գտավ Ադոյի տունը, եւ վարորդի հետ միասին իջեցրին սեւ դագաղը, որի մեջ փռված էր լաց չհարուցող դիակը: Ադոյի կինն ու տղան դիակն ընդունեցին տհաճորեն եւ բոլորովին լաց չեղան: Նրանք ոչ մի հարազատի ու հարեւանի չհայտնեցին այդ մասին: Ամբողջ գիշեր նրանք նզովքի ու պարսավանքի խոսքեր տեղացին դիակի վրա եւ դագաղը ծածկեցին քուրջերով, որպեսզի որեւէ մեկը ներս մտնելիս հանկարծ չտեսնի այդ զզվելի մեռելին ու հարեւաններին հայտնի չդարձնի կատարվածի մասին:

Նրանցից ամեն մեկն իր մեջ, ամեն մեկն, ինքն իր հետ խոսելով, Ադոյի ոճրագործ արարքները թեկուզ աննշան չափով հանդուրժելու հնարավորություններ էին որոնում, բայց այդպես էլ չէին գտնում: Եվ մայր ու որդի միասին եկան այն եզրակացության, որ գողությունը, անբարոյականությունը, ընչաքաղցությունը, շատ ու շատ արատներ հնարավոր է ինչ-որ կերպ հանդուրժել, սակայն հայրենադավին ու ժողովրդին դավաճանողին հանդուրժելու տեղ երբեք չի կարող լինել: Այդիսկ պատճառով էլ այդ տանը սուգ ու ողբ չբարձրացավ, ինչպես սովորաբար լինում է բոլոր տներում, երբ վախճանվում է ընտանիքի անդամներից մեկը:

Ավելին, մորն ու որդուն թվում էր, թե դիակից պոկվում են զզվանքի անտեսանելի սլաքներ ու մխրճվում իրենց սրտերում: Ադոյի դիակը նրանց համար այդ պահին ամենաատելի առարկան էր, որի համար էլ շտապում էին՝ առավոտ շուտ վաղ թաղել նրան ու մեկընդմիշտ ազատվել նրա հետ կապված ամեն մի անեծքից ու գլխացավանքից:

Լույսը չբացված՝ Ադոյի տղան իր ծանոթ տրակտորիստի հետ միասին գերեզմանոցի մի անկյունում տրակտորով արագ փոս փորեցին ու այնտեղից գաղտագողի հեռացան՝ աշխատելով աննկատ մնալ դեռեւս օրվա եռուզեռի մեջ չմտած մարդկանց աչքից:

Այդ նույն երեկոյան, երբ մութը վարագույրի պես օգնում էր նրանց՝ թաքցնելու իրենց գաղտնիքը, Ադոյի տղան իր ազգական ավտովարորդի հետ նրա մեքենայի թափքում տեղավորեց հոր դիակը, հասցրեց գերեզմանոց, ուղղակի գցեց փոսի մեջ, հողով ծածկեց ու վերադարձավ տուն:

Զարմանալի է, որ Ադոյի տանեցիները նման տնազավարի թաղումով հանգստացել էին, նրանց թվացել էր, թե մի ծանր բեռ իրենց ուսերից ցած է ընկել, մինչդեռ ժողովրդի ատելության ալիքը դեռեւս նոր-նոր էր լեռնանալու՝ խաթարելով նաեւ Ադոյի ընտանիքի անդամների անդորրը:

Հաջորդ երկու օրերի ընթացքում գյուղով մեկ տարածվեց Ադոյի մեռնելու եւ գերեզանոցում թաղվելու լուրը: Փեթակի գազազած ճանճերի նման մարդիկ խռնվում էին ծուռումուռ ու նեղլիկ փողոցներում, խմբերով գնում էին գերեզմանոց, թքում Ադոյի գերեզմանին, հայհոյում եւ պահանջում գյուղի ղեկավար մարմիններից, որ դավաճանի լեշը հանեն ու դուրս շպրտեն սուրբ գերեզմանոցից:

-Դավաճանի դիակը պղծում, աղտոտում է մեր անարատ հողը,- բղավելով ասում էր մի բարձրահասակ ծերունի:

-Մենք թույլ չենք տա, որ սատկած շունը թաղվի մեր պապերի ու հայրերի կողքին,- գոռում էր հարեւան Պողոսը:

-Դու՛րս, դու՛րս գերեզմանոցից,- զայրալից ասում էին շատերը:

Գյուղի ղեկավարները համոզեցին, որ կարելի է սպասել մեկ-երկու օր՝ գերեզմանոցում գաղտնի թաղված մարդու ով լինելը պարզելու, որոշակի հետազոտություններ կատարելու, ապա նոր զբաղվելու բարձրացված հարցերով:

Վերջապես մարդիկ ցրվեցին՝ հիմք ընդունելով ղեկավարների հայտարարությունը:

Գիշերն անցավ: Լույսը չբացված՝ հայտնի դարձավ, որ Ադոյի դիակը հանել են, առանց դագաղի, պարանը կապել են վզին ու քարշ տվել գերեզմանցից դուրս, փողոցներով մեկ, ապա նետել հանրային զուգարանի փոսը: Թե ովքեր էին եղել դավաճանի դիակի հետ նման դատաստան տեսնողները, այդպես էլ չիմացվեց: Միայն պարզ էր, որ այդ դաժան դատաստանը բխում էր ողջ գյուղի մարդկանց սրտերից:

Ադոյի տղան ու հարազատներից երկուսը դիակը նորից վերադարձրին գերեզմանոց ու երկրորդ անգամ թաղեցին: Սակայն հաջորդ առավոտյան պարզվեց, որ գերեզմանոցից ու հանրության կողմից մերժված դիակը կրկին տեղում չէ. այս անգամ արդեն Ադոյի դին այնպիսի անհայտ տեղ էին տարել, որ այդպես էլ տեղն անհայտ մնաց ամենքին: Դրանով իսկ գյուղը հանդարտվեց:

Հարցնող լինի, թե Դունուշն ու Ռափոն այդ օրերին ինչպե՞ս էին պահում իրենց: Նրանք գնում էին գերզմանոց, խունկ ծխում իրենց մեռելների վրա եւ ջրում ու խնամում այտեղ աճեցրած ծաղիկները:

/շարունակելի/

Արտաշ Ստեփանյան

ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ԲԱԶԿԱՄԱՐՏԻ 15 ԵՎ 18 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքում կայացել է բազկամարտի Հայաստանի առաջնություն, որին մասնակցել են 15 եւ 18 տարեկան շուրջ 200 մարզիկ՝ հանրապետության տարբեր մարզերից:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, բազկամարտի Հայաստանի առաջնությունը Մարտունի քաղաք բերելու նախաձեռնությունը բազկամարտի աշխարհի չեմպիոն Ազատ Սրապյանինն է:

Մարտունու համայնքապետարանը հավանության է արժանացրել չեմպիոնի գաղափարը եւ աջակցել մարզական միջոցառման անցկացմանը՝ ապահովելով դրա համար անհրաժեշտ բոլոր պայմանները:

Ըստ Ազատ Սրապյանի՝ մրցաշարի անցկացման նպատակը երիտասարդ ու պատանի ուժեղագույն բազկամարտիկներին ի հայտ բերելն է, որոնց համար հետագայում ճանապարհներ կբացվեն՝ միջազգային մրցաշարերին մասնակցելու եւ Հայաստանի մարզական պատիվը բարձր պահելու համար:

15 տարեկանների խմբում 50 կիլոգրամ քաշային կարգում երկու ձեռքով անցկացված մրցապայքարում առաջին տեղը գրավել է արմավիրցի Սեդրակ Փիրոյանը, 18 տարեկանների խմբում, ծանրքաշայինների կարգում՝ երեւանցի Գեղամ Խաչատրյանը:

Նման մրցաշար Մարտունիում անցկացվում է առաջին անգամ:

ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան քաղաքում մեկնարկել են մի շարք փողոցների ասֆալտբետոնյա ծածկույթի փոսային նորոգման եւ ճաքալցման աշխատանքները:

Ծրագրում ում ընդգրկված են Նաիրյան, Սայաթ-Նովա, Շինարարների, Գրիբոյեդով, Սարգիս Սեւանեցի, Հովի. Թումանյան, Չարենց, Հրազդան, Շահումյան փողոցների ասֆալտբետոնյա ծածկույթի փոսային նորոգման աշխատանքները:

Աշխատանքների մեկնարկը տրվել է Վլ. Կարապետյանի անվան հրապարակից:

Աշխատանքները ներառում են ասֆալտբետոնե ծածկույթի կտրում, հիմքի իրականացում, բիտումի տարածում, ծածկույթի պատրաստում, դիտահորերի եւ անձրեւընդունիչների ծածկի սալերի ապամոնտաժում եւ վերատեղադրում, դիտահորերի պատերի բարձրացում, անձրեւընդունիչների մաքրում:

Աշխատանքներն ընդգրկում են 3000 քմ. ասֆալտապատում եւ 500 գծամետր ճաքալցում:

Ծրագրի պայմանագրային արժեքը 26 միլիոն 940 հազար դրամ է, որն հատկացվելու է համայնքային բյուջեի միջոցներից:

Արմինե Ղուկասյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՀԱՅՏՆԻ ԵՆ «ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՍԿԵՏԲՈԼԻ ԼԻԳԱ» ՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ՀԱՂԹՈՂՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզում ավարտվել են «Դպրոցականների բասկետբոլի լիգա» մարզական խաղերի համայնքային եւ մարզային փուլի մրցումները, որոնք անցկացվել են 2 տարիքային խմբերում:

Մարզական խաղերի մարզային փուլի մրցումներին մասնակցել են համայնքային փուլում յուրաքանչյուր տարիքային խմբում առաջին տեղ գրաված թիմերը:

Այս փուլի մրցումներն անցկացվել են կիսաօլիմպիական եղանակով, այսինքն՝ թիմերը երկու պարտությունից հետո դուրս են մնացել հետագա պայքարից:

Մարզային փուլը մեկնարկել է ապրիլի 5-ին՝ առաջին տարիքային խմբի թիմերի մրցապայքարով:

Այս տարիքային խմբում հանդես են եկել Ծովազարդի միջնակարգ, Սեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան N 1 հիմնական, Վերին Գետաշենի N 1 միջնակարգ, Վարդենիսի N 3 հիմնական եւ Թթուջրի միջնակարգ դպրոցների թիմերը:

Մրցանակային տեղերի համար ծավալված պայքարի արդյունքում առաջին տեղը գրավել է Վարդենիսի N 3 հիմնական դպրոցի թիմը, երկրորդ հորիզոնականում է Ծովազարդի միջնակարգ դպրոցի թիմը, իսկ երրորդ մրցանակային տեղը բաժին է հասել Թթուջրի միջնակարգ դպրոցի թիմին:

Երկրորդ տարիքային խմբում մրցապայքարի մեջ մտել են Գավառի Հ. Թումանյանի անվան N 3, Մարտունու Ս. Դարբինյանի անվան N 2, Վարդենիսի N 3 հիմնական, Դդմաշենի եւ Վահանի միջնակարգ դպրոցների թիմերը:

Այս տարիքային խմբում ուժեղագույնը եղել է Մարտունու Ս. Դարբինյանի անվան N 2 հիմնական դպրոցի թիմը:

Երկրորդ տեղը գրավել է Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոցի թիմը, երրորդ տեղը՝ Դդմաշենի միջնակարգ դպրոցի թիմը:

Մրցանակային տեղեր գրաված թիմերը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից պարգեւատրվել են գավաթներով եւ հավաստագրերով:

Եռօրյա մրցապայքարի արդյունքում հայտնի են դարձել այն թիմերը, որոնք հանդես կգան մարզական խաղերի միջմարզային փուլում:

Այս փուլի առաջին տարիքային խմբում Գեղարքունիքի մարզը կներկայացնեն Վարդենիսի N 3 հիմնական եւ Ծովազարդի միջնակարգ դպրոցների թիմերը, իսկ երկրորդ տարիքային խմբում՝ Մարտունու Ս. Դարբինյանի անվան N 2 եւ Գավառի Հ. Թումանյանի անվան N 3 հիմնական դպրոցների թիմերը:

Գեղամ Չարվադարյան

ԱՎԱՐՏՎԵՑԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի մարզի համայնքներում ապրիլի 12-ի դրությամբ ավարտվեցին գյուղաջակցության պետական ծրագրերի իրազեկման աշխատանքները, որոնք Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի հանձնարարությամբ իրականացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչության աշխատակիցները:

Իրազեկման աշխատանքները կազմակերպվել են Սեւանի, Մարտունու, Գավառի, Վարդենիսի եւ Ճամբարակի համայնքապետարաններում:

Հանդիպումներին մասնակցել են համայնքապետարանների պատասխանատու աշխատողներ, գյուղատնտեսության ոլորտի մասնագետներ, բնակավայրերի վարչական ղեկավարներ, գյուղացիական տնտեսությունների ներկայացուցիչներ:

Հանդիպումների ընթացքում մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչները խոսել են ՀՀ կառավարության աջակցությամբ 2025 թվականին իրականացվող ծրագրի բովանդակության, դրանից օգտվելու հնարավորությունների, ծրագրի արդյունավետության մասին, պատասխանել ներկաների կողմից գյուղատնտեսության եւ բուսաբուծության ոլորտներին առնչվող հարցերի:

ՀՀ կառավարության կողմից իրականացվող Բուսաբուծության աջակցության ծրագրի նպատակն է՝ ընդլայնել հացահատիկային, հատիկաընդեղեն մշակաբույսերի եւ կերային մշակաբույսերի ցանքատարածությունների ծավալները, նպաստել դրանց մշակության արդյունավետության բարձրացմանը, համախառն արտադրանքի ավելացման միջոցով բարձրացնել պարենային ապահովվածության մակարդակը, ինչպես նաեւ՝ բարելավել գյուղատնտեսական նշանակության հողերի որակական հատկանիշները:

Արտադրողականության բարձրացման նպատակով նախատեսվում է ցանքերն իրականացնել բացառապես հավաստագրված սերմերով:

Ծրագրով նախատեսվում է 2025 թվականին փոխհատուցել մինչեւ 100 հեկտար մակերեսով հացահատիկային (աշնանացան եւ գարնանացան ցորեն, գարնանացան գարի, եգիպտացորեն, վարսակ, հաճար), հատիկաընդեղեն (ոլոռ, լոբի, ոսպ, սիսեռ) եւ կերային մշակաբույսերի (առվույտ, կորնգան, կերի ճակնդեղ) մշակության մեկ հեկտարի հաշվով կատարվող հիմնական աշխատանքների (վարի, ցանքի, բերքահավաքի) եւ սերմի արժեքի համար նախատեսված ծախսերի 50 տոկոսը:

Փոխհատուցումը կտրամադրվի հետեւյալ սահմանաչափերով: Աշնանացան ցորենի մշակության յուրաքանչյուր 1 հեկտար մակերեսի հաշվով կտրամադրվի 80 000 դրամ, գարնանացան հացահատիկային մշակաբույսերի մշակության յուրաքանչյուր 1 հեկտար մակերեսի հաշվով՝ 70 000 դրամ, իսկ եգիպտացորենի մշակության յուրաքանչյուր 1 հեկտար մակերեսի հաշվով՝ 85 000 դրամ, հատիկաընդեղեն մշակաբույսերի մշակության յուրաքանչյուր 1 հեկտար մակերեսի հաշվով՝ 100 000 դրամ, կերային մշակաբույսերից առվույտի, կորնգանի 1 հեկտար մակերեսի մշակության հաշվով՝ 110 000 դրամ, իսկ կերի ճակնդեղի համար՝ 80 000 դրամ:

«Գեղամա աշխարհ»

ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՒՄ Է ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գեղարքունիք գյուղում մեկնարկել եւ ընթանում են գերեզմանոց տանող ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները:

Աշխատանքներն իրականացվում են ՀՀ կառավարության կողմից 2024 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

Գեղարքունիք գյուղի գերեզմանոց տանող ճանապարհի հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 51 միլիոն 847 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Գավառի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված է գերեզմանոց տանող ճանապարհի հիմնանորոգում՝ 535 մետր ընդհանուր երկարությամբ եւ 2926 քառակուսի մետր մակերեսով: Կառուցվելու է նաեւ 150 մետր երկարության միակողմանի մայթ, տեղադրվելու է ջրահեռացման համակարգ:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել 2025 թվականի մայիս ամսին:

Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Գավառի ՃՇՇ» ԲԲԸ-ն:

Ալվարդ Մանուկյան

ԲԵՐԴԿՈՒՆՔՈՒՄ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՏԱՐԱԾՔ Է ՎԵՐԱՆՈՐՈԳՎՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Բերդկունք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի շենքում գրադարանի համար նախատեսված առանձին տարածք է վերանորոգվում:

Վերանորոգման աշխատանքները մեկնարկել են ապրիլի սկզբից եւ ընթացքի մեջ են:

Վերանորոգման նպատակով Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեից 1 միլիոն 800 հազար դրամ գումար է հատկացվել:

Բերդկունքի գրադարանն ունի շուրջ 5500 կտոր գիրք: Գրադարանային տարածքը 2007 թվականին Բերդկունքի համայնքապետարանի որոշմամբ հատկացվել է Հայրավանքի դպրոցի ճաշարանին, իսկ գրքերը հանգրվանել են գրադարանավար Մարգարիտա Վարդանյանի բնակարանում: Շուտով արդեն այդ գրքերը կտեղափոխվեն ու տեղ կգտնեն վերանորոգված ու կահավորված գրադարանում, կհամալրվի նաեւ գրքային ֆոնդը: Շինարարական աշխատանքները կավարտվեն ապրիլի վերջերին:

Ալվարդ Մանուկյան

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆԱԿԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳԻՐԸ

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում մեկնարկել է ճանապարհաշինական հերթական սուբվենցիոն ծրագիրը:

2024 թվականին հաստատված «Սեւան համայնքի փողոցների հիմնանորոգման աշխատանքներ» ծրագրի շրջանակներում դեռեւս անցած տարեվերջին հիմնանորոգվել է էներգետիկների փողոցը:

Սեւան քաղաքի շուրջ մեկ տասնյակ փողոցների հիմնանորոգման ծրագիրը մեկնարկել է Իսահակյան, Օրբելի, Կարմիր բանակի, Սպանդարյան փողոցներից, որոնց կհաջորդեն Գեղամա, Ռուսական, Աբովյան, Սայաթ-Նովա, Սյունյաց փողոցները:

Սեւան քաղաքի փողոցների հիմնանորոգման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 628 միլիոն 990 հազար 550 դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Սեւանի համայնքապետարանը:

Ծրագրով նախատեսված են քանդման, հողային, ճանապարհային պատվածքի, ուղիների եւ մուտքերի, մայթերի հիմնանորոգման, դիտահորերի պատերի ամրացման, կափարիչների, եզրաքարերի, եզրաշարերի, նոր մետաղական խողովակների տեղադրման, ջրամեկուսացման եւ այլ կարգիշինարարական աշխատանքներ:

Հիմնանորոգումն ընդգրկում է 39 հազար 657 քմ. տարածք:

Շինարարական աշխատանքների իրականացման կապալառու կազմակերպությունը «Ճան-Շին» ՍՊԸ-ն է:

Աշխատանքները նախատեսված է ավարտել 2025 թվականի ընթացքում:

Արմինե Ղուկասյան

ԳԱՆՁԱԿՈՒՄ ՀԵՏԻՈՏՆԱՅԻՆ ԿԱՄՈՒՐՋ Է ՎԵՐԱՆՈՐՈԳՎԵԼ

Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի Գանձակ բնակավայրում հետիոտնային կամուրջ է վերանորոգվել:

Վերանորոգումն իրականացվել է Գավառ համայնքի 2025 թվականի բյուջեի միջոցներով: Այս նպատակով հատկացվել է 2 միլիոն 377 հազար դրամ:

Կամրջի վերանորոգումը կրճատել է Գանձակի մանկապարտեզ եւ թիվ 2 միջնակարգ դպրոց տանող ճանապարհները: Շինարարական աշխատանքները մեկնարկել են 2025 թվականի մարտ ամսին եւ ավարտվել ապրիլի 7-ի դրությամբ:

Ալվարդ Մանուկյան

ՍԵՎԱՆԱ ԼԻՃ ԹԱՓՎՈՂ ԳԵՏԵՐՈՒՄ ԴԻՏՎԵԼ Է ՋՐԻ ԵԼՔԵՐԻ ՄԵԾԱՑՈՒՄ

Սեւանա լիճ թափվող գետերում դիտվել է ջրի ելքերի մեծացում: ՀՀ ՇՄՆ «Հիդրոօդերեւութաբանության եւ մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ տեղեկագրի համաձայն՝ 2025 թվականի ապրիլի 15-ի դրությամբ Սեւանա լիճը ծովի մակերեւույթից գտնվել է 1900 մետր 45 սանտիմետր բարձրության վրա, ինչը 17 սանտիմետրով բարձր է մնում նախորդ տարվա նույն օրվա նիշից:

2025 թվականի հունվարից մինչ ապրիլի 15-ն ընկած ժամանակահատվածում Արփա-Սեւան թունելային ջրատարով, ներառյալ ստորերկրյա հոսքը, Սեւանա լիճ է տեղափոխվել 21 միլիոն 793 հազար խորանարդ մետր ջուր:

Գավառագետում ապրիլի 10-ին ջրի ելքը կազմել է 10,6, Արգիճի գետում՝ 9,93 խորանարդ մետր վայրկյան:

Ապրիլի առաջին 15 օրերի ընթացքում Սեւանա լճի մակարդակը բարձրացել է 5 սանտիմետրով:

ԳԵՂԱՄԱ աշխարհ

Լրատվական գործունեություն իրականացնող «Գեղարքունիք» թերթի խմբագրություն» ՓԲԸ: Հասցեն՝ ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7
էլ.հասցե՝ khosrov1@yandex. ru
Գլխավոր խմբագիր՝ Խոսրով Խլղաթյան
հեռ. բջջ. 094022692

Վկայական՝ 02 Ա 050560: Գրանցման համարը՝ 25.120.00834:
Տրված 07.05.2001թ.: Տպաքանակը՝ 1000: Ծավալը՝ 2 մամուլ:
Թողարկման օրը՝ 15. 04. 2025 թ.:
Տպագրվում է «Սամարկ» ՍՊԸ տպարանում:
«Գեղամա աշխարհ» թերթի բոլոր համարներին կարող եք ծանոթանալ https://tert.nla.am կայքում: